



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

17 հուլիսի, 2017թ.

ք. Երևան

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի պաշտոնական բացում

Հուլիսի 14-ին, տեղի ունեցավ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի պաշտոնական բացումը:

Ծրագրի հիմնական նպատակն է Ծրագրի թիրախային ոլորտներում մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա, ինչպես տեղական ինքնակառավարման ու կենտրոնական պետական մարմինների հետ քաղաքականությունների մշակման գործընթացում կառուցողական և ռազմավարական փոխգործակցությունը:

Եվրոպական Միության կողմից հաստատվել է 2 միլիոն եվրո, որը կուղղվի քաղհասարակության կազմակերպությունների և կոալիցիաների ներուժի զարգացմանը: Ծրագիրն ունի ենթադրամաշնորհային բաղադրիչ, որի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀՀ-ների և ՔՀՀ-ների կոալիցիաներին: Ծրագրի շրջանակներում կհատկորոշվի 9 թիրախային ոլորտ՝ ներառյալ արդարադատությունը, կրթությունն ու բիզնես միջավայրը:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին իր ողջունի խոսքում մեծապես կարևորեց քաղհասարակության և իշխանությունների միջև երկխոսության դերին. *«Անձը երեք կերպ կարող է գործել հասարակությունում. առաջինը՝ լքել երկիրն ու ոչինչ չանել այդ երկրում, երկրորդ՝ լինել լուռ և լռյալ գործող իշխանությունների հանդեպ, և երրորդը՝ լսելի դարձնել ձայնը և ազդեցություն ունենալ հասարակության վրա: Հենց երրորդ սցենարն էլ ամենակարևորն է երկխոսության դեպքում»:*

Դեսպանը դրական գնահատեց այն, որ հայաստանյան ՔՀՀ-ները կարող են ուսանել չեխ հասարակության փորձը՝ այս ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կոնսուլտանտներ գրավված չեխական կազմակերպության միջոցով, քանի որ չեխ հասարակությունը վերջին տարիներին արագորեն է փոփոխվում:

Արդարադատության նախարար **Դավիթ Հարությունյանը** վարչապետի անունից ողջունեց ծրագրի մեկնարկն ու ընդգծեց, որ Հայաստանի կառավարությունը պատրաստ է խորը և անկեղծ համագործակցության. *«Բոլորս շատ լավ հասկանում ենք, որ Կառավարությունը քաղաքականության մշակման ու դրա իրականացման հիմնական պատասխանատուն է, սակայն դա ամենևին չի նշանակում մեկուսացում, քանի որ կառավարման համակարգի արդյունավետությունը կարող է բարձրանալ միայն ակտիվ քաղաքացիներից կառուցված հասարակության դեպքում»:*



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռապատճեն՝ +37410 54 64 95

Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե՝ Կալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա քննարկման ժամանակահատվածում նրանք միայն ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային գանգաճությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

«Իրավաբանների հայկականասոցիացիա» ՀԿ նախագահ, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար **Կարեն Զադոյանն** իր ողջունի խոսքում նշեց. «*Ծրագրի հաջողության առանցքային գործոնը կլինի այն, որ ուսուցանված ՔՀԿ-ները կկարողանան սկսել արդյունավետ երկխոսություններ՝ հանրային քաղաքականությունների մշակման վերաբերյալ և կունենան շոշափելի արդյունքներ այս հարցում: Այս քայլը կատարելու համար ՔՀԿ-ները կկիրառեն փաստերի վրա հիմնված հանրային քաղաքականություններ մշակելու, կառավարության և ՏԻՄ գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնելու, կոալիցիաներ, ցանցեր հիմնադրելու և զարգացնելու, կառավարության և ՏԻՄ-երի հետ կառուցողական և կայուն երկխոսություն իրականացնելու կարողությունները:*»

Կարեն Զադոյանը ներկայացրեց նաև «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի նպատակը և ուղղությունները, ինչպես Ծրագրի շրջանակներում մինչ օրս իրականացված գործողությունները և միջանկյալ արդյունքները:

Ծրագրի շրջանակներում ծրագրային թիմի կողմից իրականացվել է և հուլիսի 14-ին ներկայացվեց Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների քարտեզագրման և Ծրագրի թիրախային ոլորտների հատկորոշման մասին զեկույցը: Այն վերջանականացվելուց հետո կներկայացվի հանրության ուշադրությանը:

«**Կառուցողականերկխոսությանհանձնառություն**» ծրագիրն իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրով» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՄԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի հիմնական նպատակն է Ծրագրի թիրախային ոլորտներում մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա, ինչպես նաև Հայաստանում ՔՀԿ-ների՝ ոլորտային կոալիցիաներ կազմելու կարողությունների ուժեղացումը, հանրային քաղաքականությունների ձևավորման գործընթացներում մասնակցությունը, թիրախային ոլորտներում խնդիրների հատկորոշումը և համապատասխան քաղաքականությունների մշակումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ու կենտրոնական պետական մարմինների հետ քաղաքականությունների մշակման գործընթացում կառուցողական և ռազմավարական փոխգործակցությունը: Ծրագիրն ունի դրամաշնորհային բաղադրիչ, որի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին: Ծրագրի թիրախային ոլորտները 9-ն են, այդ թվում՝ արդարադատությունը, կրթությունը, բիզնեսը:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն էնպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ անկախությունը իրազեկել, իսկ նրա իրավունքները պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00; հեռ.՝ 540199; ֆաքս՝ 580299; URL՝ <http://www.armla.am>, <http://ccd.armla.am>, էլ. փոստ՝ info@armla.am:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռապատճեն՝ +37410 54 64 95

Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե՝ Կալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուս, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա քննարկման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: